

ԺՈՂՈՎՐԴԻ ՄԷՋ¹⁾

ԲՕՋԵԳԵՐԻ

Քսենևհինգերորդ կիրակի

Անցած հինգշաբթի հօլեհնդորՖուս տօնեցինք այսպէս կոչուած կուսական, կամ պսակների տօնը, թնդանօթներին փոխարինող ռմբիկների թնդիւններով մի գնացք էր սա:

Նոյնիսկ վառօդն էլ այստեղ աղօթքներ է առաքում դէպի երկինք, թողութիւն խնդրելով իր՝ աշխարհի վրայ կատարած անկարգութիւնների համար: Եթէ «Կոնտինենտալ փոստի» աշխատակիցները տեսնէին ինձ առանց զլխարկի զիւղացիներին հեռակէլիս և նրանց հետ երգելիս, կ'բացականէին՝ ի՞նչ չի անի մարդ քսան հազար կրօն ստանալու համար: Բայց այժմ հեռացել եմ նրանցից և լիայոյս եմ որ ընդմիշտ: Աշխատանքը և չարչարանքը կապեցին ինձ զիւղական կեանքի հետ: Վաղուց արդէն նկատել էի, որ ուրախութիւնը և ղուարճութիւնը մարդկանց անչատուած է իրարից, իսկ տանջանքը՝ միացնում: Մարդիկ միաւորուում և հողեպէս յարում են իրար միայն այն ժամանակ, երբ արիւնակից վերքերն են կապում նրանց: Որտեղ վիշտն է, այնտեղ զիւրութեամբ սկիզբ են առնում հաւատը և սէրը:

Նա, ով ինքը անձամբ մշակել է դաշտը, ըմբռնում է երկրային պտուղների պահպանութեան և կայծակն ու վատ եղանակը իրանցից հեռացնելու մասին աղօթքները: Երբ այդքան կենդանի արարածներ միացած որևէ բան փափագում, դէպի մի որևէ բան ձգտում, նոր ոյժ է առաջանում և նրանց ցանկութիւնները իրագործում են: Մի բանանտեղծ գրել է.— այն ըոպէին, երբ բոլոր կենդանի արարածները միաժամանակ

1) Լուսնայ 1909 № 9

լըջօրէն ցանանային դօլութիւն չունենալ, աշխարհը կ'կործանուէր... եթէ ընդհանուր համաժայնութեամբ հնարաւոր է վերացնել աշխարհը, ուրեքն նոյն ընդհանուր ցանկութեամբ կարելի է հաստատել այն: Ես բարձր եմ դասում մարդկանց միաբանութիւնը սիրոյ, ատելութեան, ձգտումների մէջ: Այդ միաբանութիւնից է կախուած գուցէ և բաղդի կառավարութիւնը:

Թափօրի ժամանակ երիտասարդները, ի հարկէ, անձնատուր էին լինում և այլ մտքերի, բացի կարմիր տմայրովանուց, որի տակ առաջ էր ընթանում քահանան ս. մասունքներով, բացի լապտերներից և խաչվառներից ամենքն էլ (օրոնց թւում և ես մեղաւորս) տեսնում էին իրանց առաջ սպիտակ զգեստներով և լեռնապսակի ճիւղերը գլխին աղջիկների երկար շարքը: Լեռնապսակի ճիւղը կուսական անարատութիւն է նշանակում այս կողմերը: Այդ կարգը կատարում է տարեներ մէկ անգամ աստուածային մարմնի տօնի օրը: Բոլոր աղջիկները մեծ թէ փոքր, զեղեցիկ թէ տղեղ բոլորեքեան իրանց գլուխները զարդարում են լեռնապսակի ճիւղերով:

Ոմանք չքաւորութեան պատճառով անկարող են լինում սպիտակ զգեստ ունենալ, սակայն դրանց լեռնապսակի ճիւղը աւելի պերճախօս է լինում ուրիշներից: Երիտասարդները, զիտենալով որ շատ թէ քիչ կարելի է հաւատ ընծայել սովորութիւններին, ուշադրութեամբ դիտում էին այդ զեղեցիկ դէմքերը: Այս տօնին իր գլուխը հպարտութեամբ ճիւղերով զարդարած աղջիկը, ոչ միայն բարձր է կանգնած հասարակութեան աչքին, այլ և մի տեսակ անհասանելի է լինում: Պատմում են, որ մի անգամ, զաղտնի կերպով մեղանչող աղջիկ, տօնին լեռնապսակի ճիւղ է անցնում գլխին, բայց ժամերգութեան լեռնապսակը եղինջի է փոխում և դժբաղտի գլխին այնպէս աճում, մեծանում, որ բոլոր եկեղեցականներին տեսանելի է լինում:

— Ինչո՞ւ մի այդ տեսակ սովորութիւն չկայ տղաների համար, հարցրի ես հանաքով Րոխերից: Նա մտախոհութեամբ նախեց վրաս և ասաց որ լիմար հարցեր չառաջարկեմ իրան: Ի՞նչ է նշանակում, փիլիսոփայ:

Թափօրի ժամանակ երիտասարդները ծիծաղելով և քրքր-

քրչալով մէկ-մէկ թւում էին աղջիկներին: «Ո՞րտեղ է Ադամի աղջիկը», հարցրեց մինը. «Տէր Աստուած, նա չի երևում», «Այ քեզ բան»:

Իսկ լետոյ ասանք ինչ պատահեց: Ադամը, ժամից վերադառնալուց լետ, մտաւ խրճիթը, որտեղ Բարբելը ծալում էր ձեռքի կարը:

— Այսօր քեզ համար հասարակ օ՞ր է, Բարբել. հարցրեց հայրը:

— Հասարակ օրին չեմ հասցնում կարել:

— Ես կարծում էի տկար ես, որ այսպիսի մի օր ժամ չէիր եկել:

Աղջիկը ձգձգում էր ձեռին բռնած թելը, բայց լետոյ հանդարտութեամբ ասաց.

— Հայր, ես դուխ ղարդարելու ոչինչ չունէի, լիմար ոչ-խարը երեկ մտաւ պարտէղը և կերաւ իմ լեռնապսակը:

— Ի՞նչ էլ ի՞նչ էիր շինում, դաւակս, ասաց Ադամը և մտաւ այդին: Ժիշտ որ այնպէս էր՝ լեռնապսակի ցողունները կտորատուել, ժողիկները թառամել էին:

Շուտով աղջկայ մօտ եկաւ մայրը: Ես կանդնած էի սրահում: Պառաւը խօսում էր հանդարտօրէն, սակայն պէտք էր զիտենալ թէ ինչ էին նշանակում նրա ոսկրոտ, արևակէզ ձեռների դողդողոցը:

— Բարբել, ասաց նա, ինչո՞ւ մեզ հետ եկեղեցի չեկար: Բարբելը լուռ էր:

— Այդպիսի բան ոչ մի անգամ չի պատահել, շարունակեց պառաւը: Ամեն կարգին աղջիկ, այսպիսի օրին, իր պսակով եկեղեցի է դնում: Ինչո՞ւ ես լուել: Կացիր, ես ցոյց կ'տամ քեզ այդպէս կամակորել. և չ'գիտենք էլ թէ ինչի համար:

— Ես ոչ մի անգամ չեմ յամառուել, մայր:

— Ձեռ յամառուել: Ուրեմն բանը ինչու՞ն է: Բոլոր ժամանակ ոչ ոքի հետ չես խօսում և այնպէս ես ման դալիս, կարծես դժբաղդ լինես: Ի՞նչ է պատահել: Ի՞նչդ է պակաս: Ո՞վ է վիրաւորել քեզ: Տանել չեմ կարողանում, երբ մարդիկ ուռչում են:

— Բայց ես չեմ ուռչում, ասաց Բարբելը:

— Արդէն խօսում են քեզ վրայ: Ուղղակի ամենից խոր-
շում էի, որովհետեւ ամենեքեան էլ հարցնում էին «Ո՞րտեղ է
Բարբելը, ինչո՞ւ այսօր չէ երևում»: Ես հնարում էի թէ ա-
տաճներդ ցաւում են: Ձե՞ որ կրամբասէին, եթէ համոզուած
չլինէին, որ ազնիւ աղչիկ ես:

Բարբելը շուռ եկաւ, որ քաթանը պահարան դնի:

Մայրը մի քանի քայլ այլ արեց նրա ետևից և ասաց.

— Բարբել, ինձ նայիր, նայիր իմ աչքերին:

Այստեղ աղչիկը անհաստատ քայլերով դուրս դնաց խոր-
նիթից:

Իսկ պառաւը կարծես մեխուեց դետնին, նա կանգնած
էր անշարժ և նայում էր դէպի նախասենեակ, որտեղ անյայ-
տացաւ աղչիկը: Ոչ մի բառ չարտասանեց նա. միայն ձեռները
բարձրացրեց և ծալեց կարծես աղօթելիս լինէր...

Ճաշելու չեկան ոչ Բարբելը և ոչ Ռոխերը: Ոչ ոք չ'հար-
ցրեց թէ որտեղ էին: Մնացորդներս լուռ նստած էինք և չէինք
կարողանում ուտել: Առանց ճաշը վերջացնելու մէկս միւսի ե-
տևից դտրսեցինք դռալները, վեր կացանք ու բաժանուեցինք
իրարից: Վերջապէս մնացի մենակ և սկսեցի մտածել դուրիք
դէպքերի մասին:

Երեկ առաւօտ երբ տաւարը ջրհոր էի տանում, լանկարժ
տան մօտից մի վայրենի աղաղակ լսեցի և տեսայ ինչպէս Ռո-
խերը կացինը ձեռին կեռասինների մօտով վազում էր ուժ որ
հետապնդելով, Իսկ տան առաջ կանգնած էր մի խրտուիլակ,
որը կարծես բանջարանոցից եկած լինէր: Նրա ձեռները տա-
րածուած չէին, այլ դարսած ունէր կրծքին և նրանցից պա-
րանով կապած էր մի չարդէ տիկնիկ...

Այդ հրէշը կանգնած էր նրա պատուհանի առաջ:

Յուսով էի, որ բացի ինձանից և Ռոխերից ոչ ոք չտե-
սաւ այդ: Վերցրի տիկնիկը, տարայ ախոռը և հազար կտոր ա-
րի: Միբողջ օրը կասկածում էի, չնկատեցի՞նք արդեօք ձերու-
նինները, կամ հէնց ինքը, այդ խայառակ անարգութիւնը.
բայց ոչինչ չէին տեսել: Ռոխերլին էլ ոչինչ չասի և նա ամ-
բողջ օրը վրդովուած էր:

Սուկայն ես պատրաստ եմ սպանել այն մարդուն, որը այս
ընտանիքին այսպիսի անօրինակ անպատուութիւն հասցրեց: